

Պոլիս եկաւ, եւ հոն ժամանեց նաեւ Նիկոլ
 Եպիսկոպոս իր ժողովրդեան աւագանիին
 հետ, Կաթողիկոսին, մեր Նախորդին, առ-
 ջեւ, ժողովուրդն ու Եպիսկոպոսը իրարու
 հանդէպ խաղաղութիւն կնքեցին գրաւոր
 երդմամբ եւ ուխտով: Մինչեւ ցայժմ նոյն
 Երդման համաձայն ընթացան. եւ արդ Նիկոլ
 Եպիսկոպոս դարձեալ սկսաւ խռովել ժողո-
 վուրդը բանի մը համար. այսինքն ան կը
 ստիպէ ժողովուրդն ու քահանաները, որ
 բաժակի մէջ ջրախառն գինին ընդունին
 Պատարագի ընթացքին. այս սովորութիւնը
 մեր հայ եկեղեցին չունի, մեր հին հայրերէն
 սկսեալ. այդ ծէսը չունին ոչ այն հայերը,
 որոնք ենթակայ են երկու բռնապետներու՝
 օսմանցիներու եւ պարսիկներու՝ ոչ ալ այն
 հայերը, որոնք մեզի կը հպատակին Լեհաս-
 տանի մէջ: Այս մասին ստոյգ եմ՝ թէ նաեւ
 Սրբութիւնդ չ'ուղեր եւ չի հաճիր որ այդ-
 պիսի պատճառի մը համար տրտունջ եւ խռ-
 վութիւն ըլլան մեր եկեղեցւոյն մէջ. այդ
 ծէսը չէ գործադրուած մինչեւ ցայժմ: Եւ
 արդ, ով Հայր համայն հոգիներու, երբ
 լսեցինք մեր ժողովուրդին բաղձանքը, մենք
 որ այս օրերուս Կ. Պոլիս կը գտնուինք, ժո-
 ղով գումարեցինք մեր եկեղեցականներուն
 հետ, եւ ուրիշ միջոց չգտանք, եթէ ոչ մեր
 աղաչանքներն ու աղաղակը հասցնել Գերեր-
 ջանիկ Փոխանորդին Յիսուսի Քրիստոսի եւ
 իշխաններու Պետին. այս նպատակաւ ահա
 ընտրեցի խորհրդականներէս մին, տեսքով
 ծերունի, երիտասարդութենէ վարժուած մեր